

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1897 թվականի
Պուլկարիոյ համար տարեկան 10 ֆրանկ
» » վեցամսեայ 5 »
Արտասահմանի » տարեկան 12 »
» » վեցամսեայ 6 »
ԿԱՆՆԻՒՆ ՎՃԱՐԵԼԻ

Համակ դրամ եռայն դրկեղ հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈԼԿԱՐԻՍ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).

Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դատաւար-
ները միայն կը հրատարակուին անդո-
ղութիւն կամ մասամբ:
Դանուցման տոյր 20 սանթիմ. երե-
փեկ անկի անգամներու համար 20 0/0
զեղջ կը շինի:

ՍԻԱԼ ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ

—

Պուլկարիոյ զանազան տեղեր
իրաւունքի մասին սխալ տարա-
ձայնութիւն մը եղած է, որուն
համեմատ իբր թէ նոր տարիէն
անդին մեր թերթը ամբողջովին
թուրքերէն պիտի խմբագրուի:
Այս լուր բոլորովին սխալ ու ան-
հիմն է:

ԷՐԻԿ ԿՆԻԿ

Պոլսական հայ մամուլը այս
պահուս վերստին ձեռք առած է
ամուսնութեան ինչ ինչ պարա-
զանքներու մէջ լուծելութեան
խնդիրը, որ, ասկից առաջ այն-
քան յաջողութեամբ ծեծուած էր
Հայրենիքի մէջ, առանց սակայն
նպատակաւ ելքի մը յանգելու
ժամանակ ունենալու:

Տեսնենք թէ այս անգամ ա-
ւելի բախտաւոր պիտի ըլլա՞ն այն
հաղորդար եղբայրները, այր թէ
կին, որոնք մեր ամուսնական ա-
նողքը և տրաքոնական սովորու-
թեանց ճնշման ներքեւ կը հեծն-
ու կը հեծնեն:

Աւետարանը, քրիստոնէութեան
այս վսեմ օրինադիրքը, իր պար-
զութեանը մէջ այնքան հասկա-
լի է որ, եթէ մէն մի անհատի
սեփական հասկողութեանը թու-
ղուէր, ամէնէն անմշակ միտքն
իսկ զայն ուշի ուշով կարգաւոր
կէթ ոչ մտքին դատողութեամբը,
գէթ հոգւոյն զգացումներովը պի-
տի կատարելապէս թափանցէր ա-
նոր պարունակած յաւիտենական
ճշմարտութեանց:

Դժբախտաբար իր լակնական
ոճովն ու անհունութեամբը, ա-
ւետարանը, զանազան աստուա-
ծաբաններու ձեռքերուն մէջ ա-
մէնէն հակոտնեայ ըմբռնումներու
տեղի տուած է: Դարերու ըն-
թացքին մէջ երանելիներ, անձ-
նական շահու կամ փառասիրական
զգացումներէ զրդուած և նոյն
իսկ գուցէ անկեղծ համոզումով
չեն կրցած իրենց մէջ համաձայ-

նել. և այսպէս արտադրած են
այն պառակտուած դրութիւնը
որուն մէջ է այսօր քրիստոնէու-
թիւնը:

Առաքեալներու կողմէն իր
բոլոր մեկնութիւններովը թող-
ուած Աւետարան մը միայն կըր-
նար այդ խճճմանքներուն առաջին
առնել. բայց այդ չիկայ: Միւս
կողմէ յոյս ալ չունինք, որ վեր-
ջին դատաստանի օրէն առաջ
երկնային այցելութիւն մըն ալ
ընդունինք, որ աշխարհիս չորս
կողմերը գտնուող եկեղեցական
պետերը մէկ տեղ բերելով, շարք
մը դասախօսութիւններով ամէնէն
ուշիղ ըմբռնման կերպը առանգէր
անոնց:

Քանի որ կրօնական աշխարհը
այս դրութեան մէջ է, խաչի
պաշտօնականներու պարտքը չէ՞
աստուածային պատուէրները ի-
րենց պարզութիւնովը հաս-
կնալ, չի խծրծել, Աւետա-
րանը դժբախտութեան գործիքի
մը չի վերածել և չի տառապեցը-
նել ժողովուրդները յանուն Քրիս-
տոսի:

Արեւմտեան եկեղեցին բնաւ ա-
մուսնալուծութիւնը չընդունիր:
«Չոր աստուած զուգեաց, մարդ-
մի մեկնեացէն» իր բացարձակ ի-
մաստովը կիրառութեան կը դրուի
այդ եկեղեցիին մէջ: Ճիշդութե-
անը շատ խտրապահանջ կըլլան
այն բոլոր վարդապետութեանց
համար, որոնք առանց իրենց փառա-
ւոր անձին ֆիտսելու, միայն հօտը
ճնշելու կը ծառայեն, և բնաւ
ակամջ չեն կախել քրիստոնական
այն միւս պատուէրներուն, որոնք
բաւական թափանցիկ են սակայն
դժբախտ ամուսնութեանց լուծե-
լիութիւնը ցուցնելու համար:

Քրիստոնեայ միւս եկեղեցիները
աւելի մեղմ և մարդասէր են, իսկ
Հայաստանեայց եկեղեցին թէեւ
արեւելեան եկեղեցիին մէկ ճիւղը,
վերջին դարերու մէջ, պապական
ազդեցութեան տակ, ամուսնա-
կան այս խնդիրներու մասին աւելի
արեւմտեան եկեղեցիին հետեւած
է:

Մեր եկեղեցական հին ժողով-
ներու վճիռները և Մխիթար

Դոշի օրինադրքին տրամադրու-
թիւնները, որոնք այս առթիւ
անգամ մըն ալ հրապարակուած և
ժողովրդականացած են, միաձայն
են հաստատելու լուծելութեան
սկզբունքը այն քանի մը ստիպու-
ղական պարագաներու մէջ որոնք
ամէնուս ալ ծանօթ են:

Եւ յետոյ, ուրիշ կերպ ալ չէր
կրնար ըլլալ: Օրէնք մը ամէն
բանէ առաջ գործադրելի պէտք է
ըլլայ: Մարդիկներէ անկարելին
պահանջող օրէնքը ինքնին կը
ջնջուի: Եւ անշուշտ այս հիման
վրայ է որ հաստատուած են Աւե-
տարանի և ժողովներու որոշում-
ները:

Արդ, քանի որ մեր կողմն ու-
նինք Աւետարանը և մեր եկեղեց-
ւոյ հին և հարազատ դաւանու-
թիւնները, որոնք ամուսնութեան
լուծելութեան դէմ բացարձակա-
պէս հակառակելէ հեռի են, ար-
դարեւ անորակելի կը դառնայ մեր
եկեղեցական ձեռնհաս մարմինե-
անքը ընթացքը, որոնք այնքան
ժամանակէ ի վեր, ինքնաբերա-
բար լուծած ըլլալու էին խնդիրը,
առանց ժողովրդային տրտուշնե-
րուն և բողոքին սպասելու:

Եթէ իրօք ցանկացող են հօտին
երջանկութեան, ինչպէս կը հաւա-
տանք, ինչո՞ւ չեն ջանար բարե-
փոխել այդ կանոնները կամ լու-
եւս քմահաճոյքները, զայնս հա-
մաձայնեցնելով Աւետարանի, մեր
հին եկեղեցիին, մարդասիրու-
թեան և ժամանակիս պահանջում-
ներուն հետ:

Հայրեկի՞ն օրովն ալ չի պիտի
բարեւորին այդ կանոնները, ինչ
որ անցած ըլլալով բոլոր այն շըր-
ջաններէն ուսկից մարդ մը կրնայ
անցնիլ, հեռի է պարզ վեղարա-
ւորի մը չոր սիրտը կրելէ ու ար-
դէն ասոր ազատցողը մէկէ աւելի
անգամներ տուած է, կրկնամուս-
նութեան արտօնութիւններ տալով
քանի մը դժբախտներու:

Ասկից զատ խնդիրը հիմնա-
կան և ֆիսառակար հանգամանք տը
չունի մեր եկեղեցիին համար և
ամբողջութիւնը կը բաղկանայ ա-
նի մը հաստատելի օրէնքներէ, ու
որոնք տկարը պաշտպանեն զօրաւո-

րին դէմ, պանդուխտին լքուած
կիներ՝ մոռացութեան դէմ, պար-
տաճանաչ ամուսնը անբարոյակա-
նութեան դէմ, վերջապէս մարդ-
արարածը ամէն կարգի և ամէն
սեռէ հրէշներու դէմ:

Խնդիրը աւելի ստիպողական կը
դառնայ, երբ նկատի առնենք թէ
ազգային արդի կացութեան մէջ
մանաւանդ որքան քաջալերուելու
են անոնք որոնք տրամադիր են
«մեծ աշոյն» արտասանելու: Սխալ
քայլի մը պարագային, պատուոյ և
երջանկութեան յաւիտենական կո-
րստեան հեռապատկերը քիչ մը
խրաչեցուցիչ չէ՞ այսպիսիներուն
համար:

Ուստի՝ պէտք է որ մամուլ և
ժողովուրդ չի դադրին պահան-
ջելէ:

Բայց նկատելի կէտ մը կայ, ու-
րուն մասին ուրիշ անգամ ալ խօ-
սելու առիթն ունեցած ենք. այ-
սինքն՝ մեր արարք լոկ պահան-
ջումի սահմանէն անդին անցնելու
չեն: Ազգային ներկայ դրութեան
մէջ մանաւանդ, եկեղեցւոյ հարա-
զատ դաւակ մը միշտ կը համա-
կերպի օրէնքին, որքան ատեն որ
օրէնքի ուժ ունենայ ան, ըլլայ
բանաւոր և կամ անհիմն:

Յաւէտ անարգելի կըլլայ այն
հայը, աշխարհական կամ քահա-
նայ, որ նկրտի կանխել ապագան
և իր անձին հանգստութեանը հա-
մար ըմբոստանայ և գէշ օրինակ
ըլլայ ուրիշներու, մէկ խօսքով
դատապարտելի ձգտումներ ցուցնէ
մեր ամէնէն մեծ ու կարեւոր հաս-
տատութեան՝ Հայ եկեղեցւոյ ծո-
ցին մէջ անխնայութեան սերմեր
ցանկելու:

Գամեթ-Արշալիր

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Մեծ ուղադրութեամբ կարգա-
ցի «Պուլկարիոյ» Հայութեան ա-
պագան» խորագրով յօդուածը,
զոր հրատարակեց իրաւունք, Սա-
կայն ինձ կը թուի որ յօդուա-
ծագրին դիտողութեան վրիպած
է խնդրոյն հետ սերտ առնչու-

թիւն ունեցող կէտ մը, զոր պիտի փորձեմ քանի մը անգամ աւելնուն նկատողութեան յանձնարարել:

Երբ ժողովուրդի մը մէկ բեկորը իր մայր հայրենիքէն հեռացած է, և հեռաւոր օտար երկիրներու մէջ հաստատուած, բնականապէս ենթակայ կըլլայ իր բնատոհմային յատկանիշերէն հետըզհետէ խորթանալով ձուլուելուն ընկերական այն բնիկ մեծ զանգուածին հետ որուն հետ շարունակ ստիպուած է չփռել՝ գոյութեան պայքարը մղել կարին նայու համար:

Այսպիսի ժողովուրդ մը ինքիր մէջ ամփոփուելու և ապագայի վտանգը հեռատեսելով գործելու համար անհրաժեշտաբար պէտք ունի բարոյական հոգեւոր պետի մը որ նոյն ժողովուրդին անհասանելի իրարու հետ միացնող կապերուն մէկ մարմնացումը կըրնայ նկատուիլ:

Ո՛վ չգիտեր լեհաստանի և Մաճառիստանի հայ գաղթականութեանց կորուստը, ո՛վ չգիտեր Ռումանիայի բնակիչներուն ալ արդէն այնպիսի ճամբու մը մէջ մտած ըլլալը, որ արագ աւանդիկ կառավարողէ կատարեալ կորուստի:

Իմ կարծիքով այս ողբալի կացութեան գլխաւոր պատճառը հոգեւոր միայնութեան պետի մը կամ առաջնորդի մը բացակայութիւնն է այդ երկիրներու մէջ, որովհետեւ իր կոչման արժանի առաջնորդի մը ներկայութիւնը ուրիշ խել մը օգուտներէ զատ միծապէս պիտի նպաստէր հայ վարժարանները պահելու այնպիսի վիճակի մը մէջ, որ կարենային ըլլալ ազգային ոգիին պահպանուող մեր մէջ:

ԲՈՆՈՒԹԵԱՆ ԶՈՅԵՐ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՔՍՈՐԵԱԼԻ ՅԵՄԱՍԱԿԱՐԱՆՅՅ)

Ժ.

— 2 —

Վերջապէս մի կերպ անցկացրի ձմեռը, շարունակ սրտատրոփ, շարունակ կասկածով, որ գուցէ մի չար դիպուածով ժամանակամիջոցս երկարացնէին. հաւատալս չէր գալիս որ մի քանի ամսից յետոյ ազատ էի լինելու: Եւ իհարկէ որ շատ անգամ ոռու կառավարութիւնը մի չնչին պատճառով աւելացնում է աքսորեալի ժամանակամիջոցը, եւ համբերութիւնը հատած, իրան ազատութեան սէմի վրա զգացող տարագրի բոլոր վարդազոյն յոյսերը մի չոր խօսքով փչրում, խորտակում եւ ոչնչացնում:

Վերջապէս եկաւ վերջին ամիսը, մայիսը, այդ բնութիւնը վերածնող ամսի վերջին էլ ես էի նոր կեանք ստանալու:

Ամսի սկզբից ինձ համար ապրիլը աւելի զփուարացաւ, օրերը տարիներ

Մաճառիստանի խօսքս Պուլկարիոյ վրայ ամէն մարդ համակարծիք պէտք է ըլլայ: Դեռի հետ ուր եթէ այս երկրին լուսամիտ վարչութիւնը մի քանի քաղաքականութեան արժանի ազատականութեան բոլորովին մեզ ազատ թողցած է մեր եկեղեցական ու դպրոցական գործերու տնօրինութեան մէջ, սակայն միւս կողմէ՝ տնտեսական պայմաններու տակու փոփոխումը, ուրիշ խօսքով, կեանքի պայքարին հետզհետէ սուր կերպարանք մը առնելովը պիտի ստիպուինք նկատուիլ ամէն ասպարէզի մէջ, մտնել ամէնուրեք, և ամէն յարաբերութեանց մէջ ուր պատուաւոր կերպով հոգ ճարելու յոյսը կը հրապարէ զմեզ իր անդիմադրելի հմայքովը: Եւ ահա հոտ է որ վտանգը կը սպառնայ մեզ, վտանգին դիմադրուելու լուսաւոյն միջոցը, այս, պուլկարահայ վարժարաններուն մէջ նպատակաւորաբար հիմնական փոփոխութիւն մը ներմուծելը, կամ ձեռք բերելով, կրթական խնդրին բանաւոր լուծում մը տալն է:

Ուստի գուցէ կառավարիչք որ հոգաբարձութեանց ձեռնհասներկայացուցիչներէ բաղկացեալ ժողով մը գումարուի դպրոցական միօրինակ ծրագիր մը պատրաստելու համար: Կը մոռնաք սակայն որ ձեռք առաջարկը գործադրութեան առաջին քայլին մէջ պիտի հանդիպի մեծ դժուարութեան մը: Արմատացած բարբիւրու հետեւանքով եսասիրական միտումներ չպիտի ձգեն որ երբ մի և ոչ քաղաքի հոգաբարձութիւն նախաձեռնարկ ըլլայ այս խնդրին մէջ, միւսները սիրայօժար հետեւելով անոր ջանան հասնելու բաղձացեալ նպատակին:

Էին թվում, չարաթնները դարեր աւան օր խեղագարվածի նման վազում էի ոստիկանապետի մօտ եւ հարցնում արդե՞ք բարձրագոյն իշխանութիւնից չէր ստացվել ազատման հրամանը եւ միշտ բացասական պատասխան ստանալով թուլացած, ընկճված եւ գրկալոր տուն էի վերադառնում: Դատելու, մտածելու, որ եւ է բանով զբաղվելու ընդունակութիւնս կորցրել էի: ամբողջովին ջիւ էի դարձել, ոչ մի տեղ հանգիստ չէի գտնում, քունս կտրվել էր: ապրում էի երեւակայութեամբ մտքով ու սրտով թափառելով հայրենիքի սիրածս վայրերում, խօսում կարօտ անձնաւորութիւնների հետ:

Մի առաւօտ, ժամը 9ին, յանկարծ ինձ զարթեցին, քիչ էր մնում բարկանայի զարթեցնող երիտասարդի վրա, որովհետեւ շատ ուշ էի քնել, գուցէ զէմքիս արտայայտութիւնից հասկացաւ երիտասարդ տանտէրս: Իսկոյն արդարացաւ ասելով.

— Պարոն Կապիկան, ոստիկանատան ծառան եկել է ձեր ետեւից: ոստիկանապետը կանչում է: Կառք էլ է բերել, Գրիգոր Բանիչի կառքը:

Գրիգոր Բանիչը իմ լաւ բարեկամ փառաբանը էր:

Ես շտապ շտապ հագնվեցի, նախագուշակեցի մի լաւ բան: Նստեցի կառք

չէ՞ որ նախաձեռնարկ քաղաքը՝ մանաւանդ յաջողութեան պարագային մէջ՝ միւսներուն վրայ բարոյական առաւելութիւն մը ստացած պիտի երեւայ: Այդ մեր գործին չիգար և մինչեւ իսկ կը սպառնայ ամբողջ ձեռնարկելու: Զօրէն զնասիլ:

ՌՈՒՄԲ

(Շարունակելի)

ՏՕԲ ՌԱՔՕՎԱԳԻԻ ՃԱՌԸ

Նախընթաց ամսոյ 28ի և 29ի զիշերները Տօքթօր Ռաքօվաքի վտանայի «Մաշտինէնի» սրահին մէջ տնտեսական երկսեռ խումբ բաղմութեան մը առջեւ, նիւթ ու նիւնալով Պուլկարիոյ քաղաքական գործունէութիւնը և Ռուսիոյ քաղաքականութիւնը:

Թէեւ ընկերավարական երիտասարդ տնտեսական ամէն տեսութիւնները համաձայն չեն մեր սեփական կարծիքներուն, և տեղի անձկութիւնը չի ներեր մեզ արդէն ամբողջ բանախօսութեան մէկ ամփոփումը գտնել հոս, սակայն չահեկան կը գտնենք մեր ընթերցողներուն հաղորդել ճառին այն մասը որ ուղղակի մեզ հայերուս կը վերաբերի:

Խօսելով Ռուսիոյ դէմ, որոյ գլխաւոր նպատակն է զբաւել Պօլիս, տիրել Վոսիօրի, ռուսական լճի մը վերածել սեւ ծովը և ապա տիրել Միջերկրականի, ու անոր գել շարունակել իր աշխարհակալութիւնները մինչեւ Հնդկաստանի խորքը, բժիշկ տնտեսաբան յայտարարեց թէ Ռուսիա ինչ որ ըրած է Պուլկարիոյ և ուրիշ Պուլկանեան երկիրներու ազատութեան համար, իր սեփական շահերուն

քը եւ սլացայ ոստիկանատան: Այնտեղ էր ոստիկանապետը, բարեկամ, փառաբանը, եւ բանտապետը:

Առաջինը իմ ձեռքս սեղմելով յայտնեց որ մայիսի 30ից ազատ եմ, իսկ կուզեմ կարող եմ եւ մի քանի օր շուտ գնալ:

Ես ուրախութիւնից ինձ կորցրի: ոտքերիս տակը հող չէի զգում, հաւատալս չէր գալիս, չորս տարուց յետոյ կրկին ազատ, ոչ մեքենա, ոչ ոռու պաշտօնեայի հրամանի տակ, օր ու գիշեր, շարունակ զգէշ, ամեն մի քայլում, ամէն մի խօսք արտասանելիս, դա կատարեալ երջանկութիւն էր, նոր աշխարհ գալ, վերածնում, օն, այժմ ես գիտէի օգուտը այդ նոր կեանքից:

Մինչ ես այդ հոգեկան խռով գրութեան մէջ էի, պաշտօնեաները եւ բարեկամս մօտենում էին եւ սեղմում իմ ձեռքը եւ ուրախ ուրախ շնորհաւորում իմ ազատումը:

Ես սկսեցի իմ պատրաստութիւնները տեսնել, որ կարողանամ առանց մի օր մի ժամ կորցնելու հեռանալ իմ աքսորավայրից, ուղիղ մայիսի երեսուներէն:

Իմ ուրախութեանը չափ չը կարծանթնիր թարեկամներս մնացել էին

համար միայն ըրած է և թէ ասկէ ետքն ալ բնաւ տրամադիր չէ ի նպատակ քրիստոնեաներու ու է բան մը ընել անշահասիրաբար, իբր պոշտպան քրիստոնէից, ինչպէս սովորութիւն ունինք զինք կոչելու:

Ասոր իրեւ ապացոյց տեսնալու յառաջ բերաւ հայկական խնդիրը և ջարդերը, որոց պատասխանատուութիւնը իր կարծիքով ասորջապէս կը ծանրանայ Ռուսիոյ վրայ:

«Եթէ, ըսաւ, Ռուսիա քրիստոնէութեան պաշտպանն է, ինչու համար թողուց որ հարկը հազարներով քրիստոնեաներ անխնայ մորթուին Հայաստանի մէջ, երբ հազարաւոր հայեր կոչնչանային, երբ անթիւ հայ կոյսեր կը պղծուէին, երբ հայ կիներ իրրեւ կով կը ծախուէին, իշխան Հօպանօֆ աննշան դէպքեր կանուանէր այդ ամէնը և Ռուսիա կը պաշտպանէր թուրքին:

«Ռուսիա միայն իր հաշիւները նկատողութեան կառնէ և այս պատճառաւ թողուց որ Հայաստան ծայրէ ծայր արեան մէջ լողայ: Հայաստան կը գտնուի Ռուսիոյ ճանքուն վրայ դէպ ի կ: Պօլիս և անոնք երբէք չեն կրնար համաձայնիլ որ այդ ցամաքի միակ ճամբան գոցուի հայկական իշխանութեան մը հաստատութեամբ: Իշխան Հօպանօֆ յայտարարեց արդէն թէ Ռուսիա չէր ուզեր երկրորդ Պուլկարիա մը ստեղծել փոքր-Ասիոյ մէջ:

«Ուրիշ հաշիւ մըն ալ ունի Ռուսիա: Ռուսահայաստանի և կովկասի մէջ կան մօտ 2 միլիոն հայեր: անոնց մէջ շատ հաւանական է որ ռուս կառավարութեան համար անսխալ խլրտումներ առաջ

չարած, բոլորին կերպարանափոխվել էի, ուրախութիւն ու զբաղմութիւն էր ցայտում իմ աչքերից, իմ ամբողջ զէմքից, չորս տարի չէի խնդացել ինձ յատուկ բարձր ու զարթ քրքիջով եւ այժմ որ տունը որ մտնում էի խօսում էի ուրախ ուրախ, ամեն մի հասարակ բանի վրա ծիծաղում այնքան բարձր որ սենեակները զնգզնգում էին:

Սկսեցի եւ իմ հրաժեշտիս այցելութիւնները: Նախ գնացի դժբախտ անձնապահ աքսորականների գերեզմանոցը: անտէր թումբերը պատած էին մայիսեան պայծառ կանաչ խոտով: Նրանց շրջապատող ծառերի վրա ճըլվում էին թռչնիկները, գուցէ բարեւ էին բերել նրանց խեղճ ծնողներից, ծառերից կտրտեցի թարմ ձիւղեր եւ խուրձեր կապելով գրի ամէն մի թումբի վրա, ճակատս սեղմեցի, նրանց կանաչ վերմակներին միմիջալով սուր հրաժեշտիս ողջոյնը եւ բաւական տրուր հեռացայ այդ տիրաւած շիրիմներից խոստանալով նրանց կողմից բարեւներ տանիլ իրանց հայրենիքին:

ՎԱՐԴՈ

(Շարունակելի)

միւթէվէճճիսէն հարեքէթ իթմիշ տիր :

Սթանն յօմէնին Սթաննպօլտան վէրտիկի պիր թէլէկրաֆ սուհ մուհէտէնամէսինին Սուլթան տան տախի թաստիգ օլունմուշ օլունդընը պիլտիրմիշ տիր :

ՄԻԻԹԵՆԵՎՎԻԵ

Իթալիա սէֆարէթհանէսինէ թէհտիտամիդ վէթթուպ պըրադ մըջ օլմադ ճիւրմի իլէ էվէլէթ բէնճէնպիս կիւնիւ Սթանպօլ ճիւնայէթ մահքէմէսինտէն էպէտի գալէիպէնտ ճէզաքընա մահքիւմ օլան Օրիորդ Անիկին թախիսի պապընտա Բուսիա, Ֆրանսա վէ իթալիա սէֆիրլէրի խարիճիյէ նազըրընա միւրաճաթ իթմիշլէր տիր :

Մահքիւմիյէթտէն էվէլ տախի սէֆիրլէր մէզպուրէ Օր Անիկին պէրաթ իթտիրիմէսինի թալէպ իթմիշ օլմազլէ, խարիճիյէ նազըրը թէվֆիդ բաշա գըզըն գուրթարընազը վատ էյլէմիշ իբէն, աքսի օլարադ շու մահքիւմիյէթ սէֆիրլէրին հիտա տէթինի թահրիգ իթմիշ տիր :

Աշար վարիտաթընը թէմինաթ ալարադ Պանգը Օսմանինին 200 պին լիւր թիւրք հիւքիւմէթինէ վէրմէսինէ Բուսիա վէ Ֆրանսա տէվէթլէրի գարըն կէլիօրլար . պու սէպէպտէն թիւրք օրտուլարըն թանգիմի իշին իանէթին թէն թէնէմիւ օլունմըջ օլան վէ պանգատա մահքիւմ պուլունան ազնէտէն՝ էշէտտի լիւզիւմինտէն սուլայը՝ հիւքիւմէթ 100,000 լիւրա ալմազա մէգպուր օլմըջ տըր :

Սուհ մուհէտէնամէսինտէ մէշրութ օլան խուսուսի ահտնամէլէրին իքի մուհարիպ տէվէթլէր պէնինտէ՝ թանգիմի իշին Աթիւնատան իշիննի մուրախա օլարադ Մ. Տուրութիս Սթանպօլս մուվասէլէթ իթմիշ տիր :

Սուհ մուհէտէնամէսինին Եուսնա գըրալը վէ հիւքիւմէթի թաւաֆընտան մուսատադ նուսիսէսինի Սթանպօլս կէթիւքէն թիւսալիտ նամ վարօրըն կէլէճէք հաֆթա Եունանըն եէսիրլէրի ալապ Եունանիսթանա կէթիւքէնէկի թէլէկրաֆ հաֆտիսաթընտան տըր :

Էանաի մուհարէպէտէ Եունանիսթանտա հուսուլա կէլէն թազսիրաթ վն սուի իսթիմալաթը թահգիգ վէ թէթիւշ իթմէք իշին թային օլունմըջ օլան գօմիսիօն՝ էքնիքէ էքիքիս նամ գօմիթէնին պիր թազըմ էվրազըն էլէ կէշիրմիշ օլմազլէ, մէզքիւր գօմիթէնին պազը մուսաթիւթտան տօլայը ճէզպա չարըմաթը լազըմ

կէլէճէկինտէն, գօմիսիօն իշի տալիյէ նէպարէթինէ պա բարօրթ պիլտիրիպ, գօմիսիօն թահթը մուհարէմէյէ ալընմաթըն իգթիւզտընընը կէթիւքէն տիր :

Գօմիթէն իսէ մէսուլիյէթի Տէլիանի գապինէսինին իւզէրինէ աթմայա չալընըյօր :

Եունան-թիւրք սինօրընը թալին իթմէքտէ օլան մուսթէլիթ գօմիսիօն հապարըն ֆէնալըըն սէպէպի իլէ եալընը տէօրթ քիւլմէթթօ պիր մէսաֆէ թասթիւր իթմիշ վէ միւթէպազը 40 քիւլմէթթօ գատար պիր մէսաֆէնին, թէթիւշ ու թախիթիլ իւքիւզա գալմըջ տըր :

Իտարէի մախսուէնին եէնիտէն թանգիմի ու իսազը իշին պահլիյէ նազըրը Ֆրանսը վէ Ալմանիւր պանգէրլէրտէն 5-600,000 լիւրա իսթիգրալ իթմէք իշին միւզաքէրէտէ պուլունը յօրլար :

Սթանպօլտան ալընան խուսուսի մալիւմաթլարա պինտէն, Մահքէտնիտա թիւրքլէրտէն իճրա օլունան մէզալիմի պուլկար կազէթալըն միւզալալըն եազմազտա իմիշլէր՝ Եալընը պէշ պուլըրա իսքէնէ վէրիմիշ, պուլարաան պիր բաբա օլապ, իւշ քիշէթմիւշ վէ 200 տէրտէսլէ թէվգըֆ օլընմըջալ տըր :

Մալիւնաթ տախի իշի պիւթին պիւթինէ եալանա չըգարմադ իսթիլպ, պիր իսլամ գատըն վէ էրքէյին խրիսթիյանլարտան գաթլ օլընմաթընտան տօլայը իճրա օլընան թահարրիսթտա պուլկարլար տան 500 թիւքէնկ վէ սայիր լէվալիմաթը իսթիլպիյէ պուլունմըջ օլունընը եազըյօր :

Ալպանիտա տախիէն զուհուրա կէլէն իսթիլալըն թէսքինի պապընտա Եանեա օրտուլարըն կէթիւքէն օլալըն մէհարէթտէն (.) տօլայը մէզքիւր օրտուլարն աաաքիր վէ գապիթանընա Սուլթան թէշէթիւրաթընը պէյանիս սէլամ իթմիշ տիր :

Իթիլալ չըգարմըջ օլան Արնաուտ րուէսաթընը Սթանպօլս կէթիւքէն իշին վաբօրը մախսուս Խօլանմաթընտա պահրիյէ նէզարէթինին պիր չօգ թազսիւրաթը մէյտան չըգարմըջ օլմաթընտան տօլայը՝ Մէճիսի վիւքէլա տա Սաթըրազամ վէ սէրաքէր բաշալար պահրիյէ նազըրը հասան բաշայա պիր թազըմ հազարէթ վէ թազիր իթմիշ օլմալըն իւզէրինէ, հասան բաշա Սուլթանա կիտուպ՝ անլէր հազարըն տա իշիքա էլլէմիշ վէ ֆէրտա սը կիւնիւ մէճիսէ կիթմէմիշ ի

տի իսէտէ, Եըլալըն թէվասուլթը իլէ միւնապաանըն էօնիւ ալընմըջ տըր :

Կ Ի Ր Ի Տ

Սթանպօլ էլիլէրին կիրիտ հազգընտա իճրա իթմէքտէ պուլընտըզլարը միւզէքէրաթըն պուհաֆթա նիհայէթինէ վէ եախօտալա ֆրանգա սէնէպաշընա տէկին խիթամ պուլաճաղը պանն օլընմազտա տըր :

Չար հազրէթլէրինին իսմի կիւնիւ օլմադ մինտիպէթի իլէ կիրիտաէ պուլընան տիւլէլի էճնէպիյէ էսաքիւրինին նիւմայիշաթըն աքէրիյէտէ պուլընաճալարը մուզարրէր օլունընտան, թիւրք աքէրլէրինին տախի էճնէպի թապուլարըն իլէ պէրապէր պուլընմաթըն ճէվաթ բաշա ալիւլարա թէթիլի իթմիշ իսէտէ ալիւլար բաշանըն պու թէթիլի գաթիյէն ըտտա իթմիշլէր տիր :

ՏՕՔԹ. Մ. ՎԱՐԳԱՆԵԱՆ

14 տարի քաղաքապետական և կառավարական պաշտօններ վարելու համար Պուլկարիյ մէջ, հաստատած է իր բնակութիւնը վառնա երրորդ թաղ, թիւ 310, Տօքթ. կալապօլի տունը, քաղաքապետական պարտէզի դէմը, և կը դարձանէ ամեն տեսակ հիւանդութիւններ, մասնաւորապէս ներքին, կանանց, տղայոց և ծննդական գործարանաց : Հիւանդ կընդունի իր տունը ամէն օր եւրոպական ժամը 9էն 12 և 3էն 5 :

ՁԱՒԻՐԷ ԲԻԱՑԱՍԸ

Վառնա 10 Դեկտեմբեր
Պոստալ
Վալօն, լիպրա 47-52, հէթթօլ. 8.40-9.20 ֆրանք
Արապա, լիպրա 47-52 հէթթօլ. 8-10.60 ֆրանք
Արաւ
Լիպրա 38-41, հէթթօլ. 3.80-4 20 ֆրանք
Յատուղեա
100 օգգասը 19-23 ֆրանք՝ մալա կէօրէ
Մըլըր
Գուրու լիպրա 57-58, ֆր. 5.50-5.90
Նարօլէն 20,80 ֆր. հիսապը իլէ կիւնտէ 8-10 վալօն վէ 40-50 արապա պուլտալ, 5-6 արապա արաւ, 7-8 արապա ֆասուլեա վէ 80-100 արապա մըսըր կէլմէքտէ տիր :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ
ԿԱՍ
ՄՐՄՈՒՆՋ ՀԱՅԿԱԿԱՆ

Սոյն Երգարանը որ կը բաղկանայ առաւել քան 100 երեսէ, կը պարունակէ շատ մը հին և նոր ազատ երգեր, զորս այժմ ժողովորդն ախորժանօք կ'երգէ :

Փափաքողք կընան ստանալ զայն՝ փոխարէնը 1 ֆրանկի նոսկալագրոշմ (բօստի բուլ) խրկելով խմբագրութեանս, կամ գիւմիւլ հետեւեալ հասցէներուն .

Տեարք
Արիս Գուրպէթ Բուսուգ
Կարապետ Ուզունեան Սիլիստրէ
Ալէքս. Տէմիրճիպչ. Ֆիլիպէ
Իսկէնաէր Արալանեան Տօպրիշ
Յովհաննէս Պիպէնեան Պուզընշ
Արթ. Տէր Ղեւոնդ քնյոյ. Կալաց
Թէօֆիլ Թէրզեան Բէօստէնէ
Ա. Կիւլէյ Նիքոսիա

Աղբ. վարժարանաց համար՝ երբ գէթ 10 հատ կ'ուղուի, 20 առ 100 դիղշ կը լինի :

ՏՊԱՐԱՆ
ՊԵՊԵՐԱՆԷՔ ԼԵՊԵՐՈՅ

Լրագրիս վերջին երեսի սիւնակներուն մէջ օտար լեզուներով ալ ազդեր կը զետեղուին : Առանձին կը տպագրուին գրքեր, տետրակներ ու կը պատրաստուին հայերէն, պուլկարերէն, ֆրանսերէն և յունարէն լեզուներով ընկալազրեր, հասցէներ, հարսանաց և այլ հրաւիրագրեր, այցեքարտ և այլն :

ԳՆԵՐ ՉԱՓԱՒՈՐ
Փափաքողք պարտին դիմել խմբագրութեանս հասցէին :

Ա Ջ Դ

Կը ծանուցանեմ Ֆիլիպէի ընթերցասէր հայ երիտասարդութեան որ մեր տան մէջ անհատական ձեռնարկով հաստատած եմ մի ընթերցարան որ բաց է շուրջաթիւր երկուսիս ժամը 7 1/2էն մինչեւ 11 և կիրակի օրեր ժամը 1էն մինչեւ 3 1/2 : Կընդունուին բազմաթիւ թերթեր, հայերէն, ֆրանսերէն և պուլկարերէն : Մուտքը ձեր է :

ԳՐԻԳՈՐ ԹԻԻԹԻՆՃԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՎԱՐԴՕ

ԵՐԵՎԱՆԻ ՍԵՐ
Վիպակ Հայ Յեղափոխական կեանքին
ԳԻՆ 1 ՅՐԱՆՔ

Կը ԵՍԽՈՒԻ, Վառնա Իրաւունքի խմբագրատուն, Ֆիլիպէ Անտօն Գօշթով, Բուսուգ էֆէ Պօրտանեանի սրճարան :